տէ խանն և վաճառականքն Արևելից ևս ձայնեալ և ասացեալ թէ Տանք զՃԾ ղուռուշն որ ելեալ երթայ. եւ որք լւանն՝ թէ եկք եւ թէ բընիկք՝ հաւանեցան այսմ բանի։ Եւ յետ այսօրիկ այն կողմեանքն նոր իմն բան առեալ ի մէնջ թէ կաթողիկոսն զԱնատօլի նորա է տվեալ, և նա ահա նստեալ է անդ. ի՞նչ կ'ուզէք ի նորանէ։ Եւ առաւօտուս ժամ չգնաց Վարդապետն և ոչ երեկոյիս։

Դշի օրս (5 Մարտ) թուղթ ուղարկէր Մուղնեցին բարեկամացն թէ Եկէ՛ք. և ելեալ գնացին անդ Ծիլէլլէմն և Էսիլն և այլք, որ յայտնեցան յառաջագոյն, և ասեն անդ թէ Մեք կանգնեալ եմք, ո՞ւր կ'երթաս. մեր գլուխն ի քո ճանապարհն է։ Եւ օրս ի միւս կողմս մինչև Ժ կամ ԺԵ արանց ելեալ գնացին թէ Մտանեմք ի պօստանճիպաշին. եւ թէրէքէճիպաշին դէմ գայ եւ ասէ թէ Վասն է՞ր եկեալ էք այսր և զի՞նչ է խնդիրս ձեր. և նոքա ասեն թէ Ունիմք արզուհալ որ մտանեմք ի յաղան. և նա երկնչի և ասէ թէ Տո՛ւք զարզն ձեր և ես երթեալ տաց նորա և բերից պատասխանի։ Եւ տան զարզն թէ Բեգ եկեալ են այսինչ մարդ վասն պատրիարգութեան[1]) և մեր խորհուրդն ոչ է ընդ նոսա, քանզի ունիմք հրաման ի թագաւորէն ոչ նստուցանելոյ աստ պատրիգ. զայդ մի՛ արասցես։ Եւ նա ի բարկութիւն շարժեալ և ասացեալ թէ Միանգամ նոքա որ ի տեղս գան՝ զնոսա սպանանելոց եմ ի գանից և ի չարչարանաց. և դուք երթայք միամիտ եղերուք, քանզի նոքա մեզ այդպէս չը ծանուցին, այլ ծանուցին թէ Մեք վէքիլ եմք Հայոց ճօմաաթին և կամիմք զայս պատրիարգ[2]) առնել և թէ Այս աղմուկս որ ոչ էր եղեալ՝ ստուգապէս զնա պատրիարգ[3]) առնելոց էաք. և դուք այսուհետև երթեալ միամիտ եղէք, զի

1) պատրիագութե. 2-3) պատրիագ.